ՀՀ ԿԳՄՍՆ

«Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ

Հաստատում եմ

ԵՊՏՔ Կառավարման խորհրդի

նախագահ Ա. Բարեղամյան

«16» ________ 202 թ.

____

(ստորագրություն)

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Առաջնորդվելով կրթական ծառայությունների արտաքին և ներքին շուկաներում գործունեության արդյունավետության և մրցունակության բարձրացման, ուսանողների և շրջանավարտների կրթության բարձր որակի ապահովման հիմնախնդիրներով ԵՊՏՔ-ն ձգտում է բարձրացնել կրթական ծառայությունների տրամադրման և մրցունակության որակը:

Քոլեջի ռազմավարական տեսանկյունից կրթության որակի բարելավումը աշխատաշուկան մրցունակ մասնագետներով ապահովելն է ՀՀ-ում և միջազգային ասպարեզում:

Քոլեջը կարևորում է՝

1. Այնպիսի կրթական ծրագրերի և կրթական ծառայությունների ստեղծումն ու տրամադրումը, որոնք բարելավելու են աշխատաշուկայի կարիքները:
2. Որակի ներքին ապահովման գործընթացին վերաբերող խնդիրներն ու հարցերը վեր են հանվում մանկավարժական, ուսանողական խորհրդի միջոցով, քննարկվում են տնօրինական խորհրդում՝ աշխատանքների պլանավորմամբ, կազմակերպմամբ և իրագործմամբ՝ անհրաժեշտության դեպքում ինտեգրելով նաև գործատուներին:

Մշտադիտարկման և որակի ապահովման հարցում հաստատության գործունեության նպատակներն են՝

- ապահովել ՊԿՉ-ներին համապատասխան կրթական ծրագրերը,
- խրախուսել և ապահովել որակյալ դասավանդումն ու ուսուցումը,
- ապահովել կրթական վերջնարդյունքների արդիականացումը, զարգացնել մասնագիտական և փոխանցելի կարողություններ՝ աշխատաշուկայի արդի պահանջներին համապատասխան,
- ապահովել շնորհվող որակավորումների համապատասխանությունը որակավորումների ազգային շրջանակին,
- ապահովել կրթական ծրագրերի գնահատման հավաստիությունը, արդյունավետությունը և թափանցիկությունը:

- շահառու մարմինների ընդգրկվածությունը՝ որակի ապահովման գործընթացները բարելավելու համար,
- բարձրացնել դասավանդման և ուսուցման որակը՝ դասախոսական կազմի մասնագիտական որակների կատարելագործման, մանկավարժական նոր մեթոդների և տեխնոլոգիաների, համակարգչային տեխնիկական միջոցների օգտագործման ճանապարհով,
- վերազինել կրթական միջավայրը՝ ուսումնական գործընթացը արդյունավետ կազմակերպելու նպատակով,
- հետադարձ կապի միջոցով արձագանքել շահառուներից ստացած դիտողություններին և առաջարկություններին՝ կրթական ծառայությունների և գործընթացների որակը բարելավելու նպատակով,
- հետազոտության միջոցով ապահովել գիտելիքի զարգացումը և կիրառելիությունը
- կարևորվում է ուսանողների ներգրավվածությունը որակի ապահովման աշխատանքների մշտադիտարկման գործընթացներում:
- կարևորվում է նաև հաշվետվողականության և թափանցիկության ապահովումը՝ բոլոր տեղեկատվական հարթակներով:
- կարևորվում է թիմային մոտեցումը, որը կնպաստի որակի ապահովման արժեհամակարգի և մշակույթի ստեղծմանը, զարգացմանը և տարածմանը:

2. ՔՈԼԵՋԻ ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քոլեջի որակի ապահովման աշխատանքները վերահսկում և ղեկավարում է Քոլեջի տնօրենությունը:

Տնօրենությունը ապահովում է

- որակի ապահովման քաղաքականության շարունակական բարելավումը,
- վերահսկում է որակի ապահովման ուղղությամբ Քոլեջում աշխատանքների կազմակերպումը, կառուցվածքային ստորաբաժանումների կողմից իրականացվող գործառույթային և ընթացակարգային գործընթացները,

- ստեղծում և ապահովում է պայմաններ, որոնք խթանում են անձնակազմի և ուսանողների ներգրավում որակի համակարգի ներդրման աշխատանքներում:

Ամբիոնի վարիչը հաշվետու է ԵՊՏՔ տնօրենին կամ ուսումնական գծով փոխտնօրենին և իրականացնում կրթական ծրագրերի ընդհանուր կառավարումը:

Մասնավորապես՝

- իրականացնում է կրթական ծրագրի կազմակերպումը,
- ապահովում է կրթական ծրագրի վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը,
- ապահովում է կրթական ծրագրի վերջնարդյունքները և դրանց համապատասխանությունը որակավորումների ազգային շրջանակին և կրթական ծրագրի մասնագրին,
- ակտիվորեն մասնակցում է որակի ապահովման գործընթացներին՝ ապահովելով հետադարձ կապ ուսանողների և դասախոսների կողմից՝ իր կողմից կառավարող կրթական ծրագրերի, գնահատման համակարգի, դասավանդման և ուսուցման մեթոդաբանության, առկա ռեսուրսների, դասախոսական համակազմի պատրաստվածության վերաբերյալ,
- ապահովում է ամբիոնի դասախոսների մասնագիտական աճը,
- ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենին է ներկայացնում կրթական ծրագրի մշտադիտարկման արդյունքում ի հայտ եկած խնդիրները և լավագույն փորձը,
- մշակում և ներկայացնում է հիմնավորումներ և տեղեկատվություն՝ նոր կրթական ծրագրի մշակման և իրագործման վերաբերյալ,
- ակտիվորեն մասնակցում է մշտադիտարկումներին, կազմակերպում է կրթական ծրագրի ինքնագնահատման հաշվետվության պատրաստումը և կրթական ծրագրի արտաքին գնահատման աշխատանքները,
- մշակում է դասալսումների ժամանակացույց՝ մշտադիտարկումը ապահովելու նպատակով: